

կուցումը և վիճարանութեան ենթարկելով, առհասարակ, կուսակցութեան բարենորոգչական գործունէութիւնը, զիւանազիտական և քաղաքական ճանապարհով, ընդունեց, որ կուսակցութիւնը սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգչական այդ գործունէութիւնը, իբրեւ նպատակադրմար, սակայն, պարտք կը դնէ ձեռնհաս մարմիններու վրա աւելի քիչ տարեւել զիւանազիտական ուղղութեամբ՝ միշտ շարունակելով գերակշռութիւնը տալ կազմակերպական իրական ուժի զարգացման:

Գալով 1914թ. յունւար 26-ի Բարենորոգմանց Ծրագրին, այն ձեռով, որ ընդունւած է Պոլսոյ եւրոպական դեսպաններու, թիւրք կառավարութեան և ընդհանուր քննիչներու կողմէ, կը նկատէ՝ զայն իր ամբողջութեան մէջ անբաւարար և օգտակար չի գտներ, որ նոյն ծրագրի գործադրութեան ժամանակ կազմակերպութիւնը կուսակցօրէն աջակցութիւն ցոյց տայ և այդպիսով որոշ պատասխանատուութիւն ստանձնէ. կը թելադրէ միջամտութեան գործը թողուլ ազգային պաշտօնական մարմիններու:

Ասոր հետ միասին, չբացատրելով հանդերձ, որ յիշեալ բարենորոգմանց ծրագիրը կը պարունակէ կարգ մը կէտեր՝ համապատասխան մեր նապագոյն պահանջներուն, և որ, իրօք, կառավարութիւնը կը ջանայ իր բոլոր հնարաւոր միջոցներով ջլատել նոյնիսկ այդ համեստ ծրագրին իրագործումը, ինչպէս նախապէս առաջադրւած բարենորոգչական սկզբունքները, ընդհանուր ժողովը կը հրահանգէ, որ կուսակցութիւնը, անհրաժեշտութեան պարագային, ընդգրկմանայ կառավարութեան կողմէ նոյն ծրագրին իրագործման դէմ հանւած խափանարար միջոցներուն և պաշտպանէ հայ ժողովուրդին իրաւունքները»:

Ինչպէս տեսնում ենք, առանձին խանդավառութիւն չկայ դէպի բարենորոգումների ծրագիրն ու զիւանազիտական գործունէութիւնը: Ընդհանուր ժողովը անհրաժեշտ էր համարում նւիրել ներքին աշխատանքի ու սեփական ուժերի կազմակերպման:

Օրակարգի հարցերը սպառւած չէին դեռ, երբ ստացւեց եւրոպական պատերազմի լուրը, որը արտակարգ եռուղեռ առաջ բերեց թիւրք զեկավար շրջաններում, որոնց առաջին գործն եղաւ, ի հարկէ, բարենորոգումների խափանումը: Ընդհանուր քննիչ Հոֆը անմիջապէս մեկնեց Վանից: Թիւրքիայում յայտարարւեց ընդհանուր զօրահաւաք, և ամէն կողմ սկսեցին տեսնուել շտապ նախապատրաստութիւններ: Թիւրքիան սկսեց տեսնուել պատրաստուել պատերազմի:

Այս ընդհանուր կացութեան հանդէպ, այլ և աչքի առաջ ունենալով թիւրք իշխանութիւնների կասկածոտ ու բծախնդիր վերաբերումը՝ Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը և ցրեց՝ նախօրօք քննութեան առնելով Թիւրքիայի պատերազմի մէջ մտնելու հաւանականութիւնը և այդ առթիւ որոշելով հրահանգել իր մարմիններին և ընկերներին մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ և կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականութիւնները: Միաժամանակ, ընդհանուր ժողովը ընտրեց 7 հոգինոց յատուկ մի մարմին, որին և յանձնեց, պատերազմի դէպքում, լուծել ծագելիք բոլոր գործնական խնդիրները: Իբրեւ ընդհանուր հրահանգ, որոշեց ամէն գնով Թիւրքիան յետ պահել պատերազմին մասնակցելուց՝ նկատելով, որ նման քայլը կործանարար կը լինի ո՛չ միայն հայ ժողովրդի, այլ և օսմանեան պետութեան համար: